№ 72 ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 22 **1896** ՇԱԲԱԹ ՅՈՒՆԻՍԻ 22 № 72

ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

WIEN 62 BESTELL 17.7.96 1-2 N

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը՝ թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը՝ 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը՝ 2 ռ., ամսական 1 ռուբլի։

Գրվել «ՄՇԱԿԻՆ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ։ Օտարաքաղաքացիները պէտք է դիմեն հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Редакція «МШАКЪ»։ Իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction «MSCHAK»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ցիմարութիւնը մարդասիրութեան դիմակի տակ. Գիտական կարծիք ժողովրդական իրաւունքների մասին. Կրէտէի հարցը և հայոց հարցը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Շուշուց. Նամակ Ալէքսանդրօպոլից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Վերջին տեղեկութիւններ. Կրէտէ և Յունաստան. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Գրողի օրագիրը.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Թիւրքիայից.

ՑԻՄԱՐՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԴԻՄԱԿԻ ՏԱԿ

Մի ամերիկացի, ինչպէս հաղորդում է Բոստոնի մեր թղթակիցը, այս օրերս Նիւ-Եօրկում հրատարակած մի գրքոյկի մէջ՝ առաջարկում է Թիւրքաց հայերին Ամերիկա գաղթել, երջանիկ լինելու համար։ Հընարագէտ ամերիկացին պատրաստականութիւն է յայտնում վեց ամսվայ ընթացքում բոլոր թիւրքահայերին նաւերով Ամերիկա գաղթեցնել, և դրա համար ուզում է, որ ամերիկացիք նրան տան ընդամենը 1 միլիոն դոլլար, ծախսերի համար...

Մենք շատ լաւ գիտենք, որ ամերիկացիք վերին աստիճանի սիրահար են տարօրինակ ծրագիրների և օրիգինալ մտքերի, գիտենք, որ ամերիկացին „մարդասիրութեան“ համար ընդունակ է իրան մինչև անգամ Նիագարի ջրվէժից վայր նետել, բայց մարդասիրութեան անունով վարդուրել մի այնպիսի կլասիքական յիմարութիւն, ինչպիսին է ամբողջ Հայաստանը Ամերիկա գաղթեցնելը, իբր թէ թշուառներին երջանկացնելու նպատակով,—այդ անսպասելի է նոյն իսկ օրիգինալ ամերիկացիներից։

Այնպիսի լուրջ հարցերում, ինչպիսին է մի ամբողջ ազգի հարցը, ցանկալի է նոր աշխարհի որդոց տեսնել աւելի լուրջ, աւելի խոհուն և աւելի անկեղծ մարդասէր, քան այդ տեսնում ենք մենք ներկայ դէպքում, երբ կատակը փորձում է հանդէս գալ իբր քաղաքական թէօրիա, դրաւելով հասարակաց կարծիքը ոչ թէ դէպի հարցի լուրջ կողմը, այլ այն կողմի վրա, որ միայն փողոցային մամուլի թռուցիկ ֆելիետոններին կարող է սազ դալ։ Ազատ Ամերիկայի քաղաքացիներից քրիստոնեայ արևելքը աւելի լրջութիւն է սպասում։

ԳԻՏՆԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ, երբ ժողովրդի և ամբոխի բարեկամները առաջարկում են մացնել ժողովրդական կեանքի մէջ որ և է վերանորոգութիւն և դրանով միջոց տալ նրան արտայայտել իր կարծիքները և ձգտումները, ամեն անգամ, երբ առաջարկվում է մացնել ժողովրդական տարը այս կամ այն հասարակական հիմնարկութեան կառավարութեան գործի մէջ՝ ընդարձակելով ժողովրդի մասնակցութեան և իրաւունքի սահմանները,—անմիջապէս լսվում են բազմաթիւ բողոքներ և առարկութիւններ։ Դեռ վաղաժամ է այդպիսի մի քայլ անել. վտանգաւոր է ժողովրդի և ամբոխի ձեռքը տալ այնպիսի իրաւունքներ, որոնցով օգտվում է և կարող է օգտվել միայն առանձնաշնորհված, ինտելիգենտ և կըրթված դասակարդը,—ասում են ժողովրդի թշնամիները։ Գտնվում են մինչև անգամ մարդիկ, որոնք չեն քաշվում քարոզել, թէ անհրաժեշտ է սահմանափակել ժողովրդի ընտրողական կամ ներկայացուցչական առանց այն էլ նեղ իրաւունքը, և այլն և այլն։

Բոլոր այդ բողոքները և առարկութիւնները կեղծ թէ անկեղծ կերպով հիմնվում են այն թեզիսի վրա, թէ ժողովրդի, հասարակ ամբոխի հոգեբանութիւնը, ընդհանուր կերպով և միատեղ առած, նոյնը չէ, ինչ որ կրթված, ինտելիգենտ հասարակութեան հոգեբանութիւնը և թէ հասարակ ամբոխի մէջ ամենևին չեն տիրապետում այն զգացումները և դատողութիւնները, որոնցով զեկավարվում է ինտելիգենտ հասարակութիւնը։ Ժողովրդական ամբոխի հաւաքական հոգեբանութիւնը, առարկում են այդ թեզիսի կողմնակիցները, բոլորովին տարբերվում է ինտելիգենտ հասարակութեան հաւաքական հոգեբանութիւնից։ Այդ առարկութիւնը, ըստ երևոյթին հաստատուն է երևում այն հիման վրա որ, առհասարակ, ինտելիգենտ անհատը մտաւորապէս միշտ աւելի բարձր է կանգնած ամբոխին պատկանող մարդուց և նրա հոգեբանութիւնը շօշափելի կերպով տարբերվում է վերջինի հոգեբանութիւնից։ Այդ տեսակէտից ինտելիգենտ անհատի ձայնը և կարծիքը աւելի նշանակութիւն և ոյժ ունի, քան ամբոխային անհատի ձայնը և կարծիքը, հետևաբար, պէտք է ենթադրել, որ այդ թեզիսը ճշմարիտ է նաև հաւաքական ինտելիգենցիայի և հաւաքական հասարակ ամբոխի մասին։

Այս է եղել և է այն ամենաղօրեղ առարկութիւնը, որ ամբողջ ժամանակ ժողովրդի ընտրողական և ներկայացուցչական իրաւունքի հակառակորդները կարողացել են առաջ բերել և համոզել շատերին։ Սակայն այժմ, յայտնի ֆրանսիացի գիտնական Լէբոնի նորերս հրատարակած մի նոր հետազօտութիւնը „Ամբոխի հոգեբանութիւնը“ („Psychologie des foules“) վերնագրով, եթէ ոչ վերջնական, գոնէ մի զգալի հարուած է հասցնում այդ առարկութեան։ Լէբոն իրան նպատակ է դրել քննել և ուսումնասիրել, թէ ինչպէս է զգում և մտածում ինտելիգենտ և հասարակ ամբոխի հաւաքական միտքը, ինչ պահանջներ և ձգտումներ ունի նա։ Եւ իր կատարած ուսումնասիրութեան հիման վրա Լէբոն եզրակացնում է հետևեալը.

„Ամբոխի մէջ, ասում է նա, միշտ չեն տիրապետում այն զգացումները և դատողութիւնները, որոնցով զեկավարվում է նրան բաղկացնող իւրաքանչիւր անհատը։ Հէնց որ այդ անհատները հաւաքվում և կազմում են ամբոխ, նրանց մէջ երևում է մի տեսակ հաւաքական խելք, որ ստիպում է նրանց մտածել, զգալ և վարվել բոլորովին ոչ այնպէս, ինչպէս նրանք կը զգային, կը մտածէին և կը վարվէին իւրաքանչիւրը առանձին։ Իբրև օրինակ կարող են ծառայել պարլամէնտները, ժողովրդական ժողովները, մի խօսքով բոլոր այն դէպքերը, երբ անձնաւորութիւնը անհետանում է ամբողջի մէջ։ Բազմամարդ ժողովների մի ուրիշ բնորոշ գիծն էլ այն է, որ նրանց հաւաքական խելքը երբէք բարձր մակերևոյթ չունի. առանձին անհատների տաղանդները կարծէք թէ ջնջվում են ամբոխի մէջ։ Այդ պատճառով բարձր կրթութիւն ստացած մարդկանց ժողովի վճիռները իմաստութեան կողմից շատ քիչ բանով են զանազանվում հասարակ բանւորների ժողովի ընդունած վճիռներից։ Եւ այդ շատ հասկանալի է. այդպիսի ժողովներից ամենից առաջ սպասվում է ոչ թէ իմաստութիւն, այլ հասարակական կարիքների և կարծիքի արտայայտութիւն... Հասարակական հարցերի հասկացողութիւնը, աւելացնում է ֆրանսիացի գիտնականը, ձեռք չէ բերվում յունական լեզուի, մաթէմատիկայի, բժշկականութեան և իրաւագիտութեան հմտութեամբ. սոցիալական խնդիրներում, որոնց մէջ մտնում են մեզ համար անծանօթ բազմաթիւ ֆակտորներ, մենք բոլորս հաւասարապէս տգէտ ենք։ Այդ պատճառով, սահմանափակ ընտրական ժողովը չէ կարող առաջ բերել ժողովրդական կարիքների կատարեալ հասկացողութիւն, այլ միայն կաստային տիրապետութիւն։ Ամեն մի ընտրական իրաւունքի հիմն պէտք է ծառայի մի և նոյն սկզբունքը—ժողովրդի կարիքների և ձգտումների արտայայտութիւնը։“

ԿՐԵՏԷԻ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

«Новое Время» լրագիրը նորից, երկրորդ առաջնորդող յօդուած է գրել Թիւրքիայի բռնած դիրքի մասին հայոց և կրէտական հարցերում։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐՔԻԱՑԻ

I

Վան, մայիսի 28-ին

Այստեղ անցեալ աշունքից ի վեր տիֆը սոսկալի կերպով ճարակած է. շատերը մեռան, ոմանք էլ առողջացան։

Այս օրերս մի ճարտարապետ 30 գործաւորներով ուղևորուեց դէպի Շեմշդինան, պարսկական սահմանագլխի մօտ, տիրահռչակ Շեյխ Իբրաղուլլահի գիւղում մի մեծ զօրանոց կառուցանելու, որ ի պահանջել հարկին 10 վաշտ զօրք պէտք է պատսպարէ. գործը յանձնած է Շեյխ Մէհմէդ Սատրգին, որը յատկապէս զինուած քիւրդեր ուղարկել էր նրանց ապահովապէս տանելու, և գնացին։

Այստեղ այժմ մօդա է, Թուրքերը աչք կըտրած հայերին վրա շատ կը թալէն (կամբաստանեն) ասելով թէ քեզանից այսքան փող ենք պահանջում։ Աւելորդ է գործը գցել դատաստան, բողոքի ձայնը ոչ ոք է լսում, ուղածնին պէտք է որ տաս, դէմ մտնելուդ պէս խանջալը փորիդ կը տան և կը սպանեն. մուստասըն ա է—բացարձակ։

Ոչ ոք կը համարձակի առանց ընկերի այգեստաններից մէնակ քաղաք գնալ, էլ կարող էք երևակայել, թէ իսկապէս ինչ դրութեան մէջ ենք։ Արդէն տարի մ'է, որ առևտրական յարաբերութիւնները բոլորովին խզուած է քաղաքի և գիւղօրէից միջև և ժողովուրդը զուրկ է բոլորովին դրամական կարողութիւնից, բայց այդ տխուր իրողութեան վրա կառավարութիւնը բընաւ ուշադրութիւն չէ դարձնում և հարկերը և զանազան տուրքերը ամենայն խստութեամբ հաւաքում են։

Պաշարեղէնք օրէ օր սակաւանում և թանգանում են. 1 լիտր աղը այժմ բարձրացած է 12 դահեկանի, որ առաջ 3—4 դահեկանի կը ծախվէր։ Մեր աղտանքը ճանիկ գիւղումն է, քաղաքից 4—5 ժամվայ ճանապարհով հեռի, բայց մարդ չէ կարող գնալ այդտեղից աղ բերելու։ Ոչխարի միսը արժէ 4—5 դահեկան, որ առաջ $1^1/_2$—2 դահեկանի էր վաճառվում. 1 չափ ցորեն 35—40 դահեկանի էր ծախվում, այժմ 50-ի է բարձրացած, այն էլ կառավարութեան ամբարի հոտած, փտած ցորենն է, որ առաջ եթէ ձրի տրվելու լինէր՝ ոչ ոք կառնէր. պատճառն այն է, որ ցանող չը կայ, տաւար չը կայ, գիւղ չը կայ, բոլորը աւերեցին, գերեցիկ, արգաւանդ երկիրը ամայի անապատ դարձուցին։

Կ. Պոլսից երեք միւ ֆէդիղ—բարձրագոյն քննիչներ եկան, երեքն էլ զինուորական թիւրքեր էին. գնացին բոլոր քիւրդ աղաներին այցելեցին, իբր թէ նրանց գիւղերը տարված կողոպուտներ նրանցից պահանջելու համար. ով գիտէ գաղտնաբար ինչ նոր հրահանգներ տուին նրանց և ինչ ծրագրեր կազմեցին։ Վերջապէս քննիչները վերադարձան մի քանի օր առաջ, գրպաններին ոսկով լցրած, և ուղևորվեցին դէպի Ռափորի ափերը։

Առաջ քիչ ու միչ հայեր գտնվում էին կառավարութեան ծառայութեան մէջ, այժմ դրանց էլ մի առ մի ճամբու են դնում։

Անցեալ գիշեր թիւրք սրիկաք փորձեցին ամերիկացի միսիոնարների տունները կրակի տալ, բայց նրանց աչալուրջ պահապանների հսկողութեան շնորհիւ այդ չաջողվեց չարագործներին։ Անգլիական նորեկ հիւպատոսն էլ՝ բաղդերնուս՝ կատարեալ Սալիսբիւրիի ձագ մ'է. հէնց եկած օրը հիւպատոսարանի բոլոր հայ ծառայողներին ալեց դուրս քշեց և նրանց տեղը թիւրքեր դրեց։ Ինքն էլ դաժան մի մարդ է. վերջերս ամերիկացի մի հայ Վանում իր ունեցած ծնողաց մի նամակ է ուղարկում հիւպատոսարանի միջոցով. հիւպատոսը կատաղում և բացականչում է. «ես հայերի համար ուղարկված չեմ, այլ պարզապէս ռէֆօրմները չեչտելու համար»։

Ն—րդ

II

Տրապիզօն, յունիսի 1-ին

Ուղարկում եմ ձեզ հետևեալ երկու գրութիւնների պատճէնները, որ ուղարկած են միմեանց այստեղի հայոց պատրիարքական փոխանորդը և բողոքականների միսիոնարութիւնը։

Յովսէփ Ծ. վ. Այվազեան

Պատրիարք. փոխանորդի հայոց Տրապիզոնի թեմի

«Սիրելի եղբայր ի Քրիստոս՝

«Ահա երեսուն և երեք տարի է, որ եկած եմ այս երկիրը և աշխատած եմ այս երկրին մարդոց համար։ Հայ լեզուն սովրելով, գլխաւորապէս հայ ազգին մէջ գործելու պատեհութիւնը ունեցած եմ։ Շնորհակալ եմ Տիրոջմէ, որ այսչափ տարիներ ինձի տուած է տկարաբար գործակցելու հայ ազգին կրթութեան և լուսաւորութեան մեծ գործոյն։ Հաւատացէք թէ իմ, ինչպէս նաև ընկերներուս աշխատանքը, միշտ և հիմա, չէ թէ որ մէկ աղանդ մը զօրացնենք, և ընդհանուր ազգը բաժանած ըլլալով տկարանայ, հապա միայն բոլոր ազգը զարգանայ Քրիստոսով։ Եւ կարծեմ թէ այս տարուան պատահած դէպքին առթիւ ամեն մէկը համոզուեցաւ, թէ մենք անխտրաբար կաշխատենք բոլոր թշուառաց համար։ Եւ յայտնի է, թէ մեր առ միմեանս ունեցած սէրը ալ աւելի զօրացաւ, իրարու ալ աւելի մօտեցանք՝ զիրար մխիթարելու և միասին աշխատելու Տէրոջը գործին համար։ Կը խնդրեմ Աստուածմէ, որ մեզի ցուցնէ այս սիրոյ ընկերակցութիւն իր փառքին համար գործելու։

Թիւրքերի պատճէնները, որ ուղարկած են միմեանց այստեղի հայոց պատրիարքական փոխանորդը և բողոքականների միսիոնարութիւնը։

Յովսէփ Ծ. վ. Այվազեան

Պատրիարք. փոխանորդի հայոց Տրապիզոնի թեմի

«Սիրելի եղբայր ի Քրիստոս՝

«Ահա երեսուն և երեք տարի է, որ եկած եմ այս երկիրը և աշխատած եմ այս երկրին մարդոց համար։ Հայ լեզուն սովրելով, գլխաւորապէս հայ ազգին մէջ գործելու պատեհութիւնը ունեցած եմ։ Շնորհակալ եմ Տիրոջմէ, որ այսչափ տարիներ ինձի տուած է տկարաբար գործակցելու հայ ազգին կրթութեան և լուսաւորութեան մեծ գործոյն։ Հաւատացէք թէ իմ, ինչպէս նաև ընկերներուս աշխատանքը, միշտ և հիմա, չէ թէ որ մէկ աղանդ մը զօրացնենք, և ընդհանուր ազգը բաժանած ըլլալով տկարանայ, հապա միայն բոլոր ազգը զարգանայ Քրիստոսով։ Եւ կարծեմ թէ այս տարուան պատահած դէպքին առթիւ ամեն մէկը համոզուեցաւ, թէ մենք անխտրաբար կաշխատենք բոլոր թշուառաց համար։ Եւ յայտնի է, թէ մեր առ միմեանս ունեցած սէրը ալ աւելի զօրացաւ, իրարու ալ աւելի մօտեցանք՝ զիրար մխիթարելու և միասին աշխատելու Տէրոջը գործին համար։ Կը խնդրեմ Աստուածմէ, որ մեզի ցուցնէ այս սիրոյ ընկերակցութիւն իր փառքին համար գոր-

Առաջ ենք բերում մի քանի քաղուածքներ. «Յունիսի 12-ին մեծ պետութիւնների դեսպանները Կ. Պոլսում իրանց թարգմանների միջոցով Բ. Դրան բարեկամական առաջարկութիւն արին— դժուար է մինչև անգամ ասել թէ քանիերորդ անգամ—ձեռնարկել այն միջոցների իրագործման, որոնք պէտք է խաղաղացնեն Կրէտէ կղզին։ Այս անգամ էլ եւրոպական դիպլոմատիայի միջամտութիւնը առաջէ բերել ինքն Թիւրքիան։ Թիւրքաց քաղաքականութեան երկչոտութիւնը հայկական և կրէտական հարցերում չարունակում է տալ իր պտուղները. այդ երկու հարցերն էլ մնում են իրանց առաջվայ չը կարգաւորված դրութեան մէջ, իսկ վերջինը այս օրերս մինչև անգամ աւելի վատթարացաւ։ Խռովութիւնները Հայաստանում նոյնպէս անկանգ սասկացել են։ Այդ բոլորը ուղղակի հետեանք են ոչ միայնակ արտասահմանեան ագիտացիայի, որի վրա այնքան սիրում են Թիւրքիայում մատնացոյց անել, այլ և Բ. Դրան երդիմի քաղաքականութեան—խոստանալ ռէֆօրմներ և չը տալ նրանց ու բաւականանալ ծագած առանձին անկարգութիւնների զսպումով»։

Ապա խօսելով այն մասին, որ Բ. Դուռը միայն մասնաւոր զիջումներ է անում, ինչպէս օրինակի էֆէնդուն Զէյթունի գայմագամ նշանակելը և կրէտական ազգային ժողովի գումարելը, լրագիրը շարունակում է. «Զէ կարելի, ի հարկէ հերքել, որ Բ. Դուռը այդպիսի մասնաւոր զիջումներով մինչև մի աստիճան ցոյց է տալիս իր խաղաղասիրութիւնը. բայց որովհետև դրանք միայն մասնաւոր զիջումներ են, չէ կարելի նրանցից սպասել, որ խաղաղասէր կերպով ազդեն այն հարցերի վրա, որոնց լուծման համար պահանջվում են զօրեղ միջոցներ և ընդհանուր ռէֆօրմներ։ Ոչ մի տեղ գուցէ այնքան բարեկամաբար չեն վերաբերվում Թիւրքիային, ինչպէս Պետերբուրգում, ոչ մի տեղ գուցէ այնքան սաստիկ չեն ցանկանում, որ նա խաղաղվի. բայց և Պետերբուրգից, ինչպէս և եւրոպական միւս մայրաքաղաքներից չեն կարող ժամանացոյց չանել Բ. Դրան, որ իրան՝ Թիւրքիայի համար անհրաժեշտ է վերջապէս իրագործել իր խոստումները օրգանական ռէֆորմների մասին։ Թիւրքական քաղաքականութիւնից պէտք է չքանայ այն սիստէմը, որի ժամանակ աջ ձեռքը դիտմամբ չէ իմանում, թէ ինչ է գործում ձախ ձեռքը։ Թիւրքիայի ապագան, ամբողջութիւնը և բարեկեցութիւնը կախված է սուլթան Աբդուլ Համիդի և Բ. Դրան անկեղծութիւնից՝ վաղուց խոստացված ռէֆօրմների իրագործման վերաբերմամբ»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

«Երկասիրութիւններ»—Ս. Քամալեանցի։ Առաջին կապուկ, Թիֆլիս, 1896։

Կենսական խոր իմաստութիւն կայ ժողովրդի ծածելու եղանակը։ Եւ ուստի կը համարձակիմ խնդրել ձեր սրբազնութենէ.

«Նախ՝ որ մէկ սրտով ջանանք, որ Տէրունական օրը աւելի վայելուչ կերպով պահուի, որ քրիստոնեաները առևարական և ո և է աշխարհային գործերը մէկդի ձգելով, աղօթքով, հոգեւոր գրքերը կարդալով և բարի գործերով, սոյն օրուան ժամերը անցնին մեր սիրելի Փրկիչ Քրիստոսի պատուոյն համար։

«Երկրորդ՝ որ ջանանք, որ սուրբ գրքի ընթերցումները ընդհանուր ըլլայ. և անհաւատութիւն ու անհոգութիւն վարատուի, և ամենուն սրտի մէջ Քրիստոսի վրա անկեղծ հաւատք հիմնուի։

«Երրորդ՝ որ ջանանք իրարու օգնել մեր դպրոցները զարգացնելու մասին։ Եւ մեր կողմանէ կրնամ ըսել, թէ պատրաստ ենք կարող ուղղանուս չափ ձեզի օգնել, թէ մանկապարտէզով և թէ այլ կերպերով, որպէս զի դպրոցները զարգանան քրիստոնէական և ուսումնական կրթութիւնով։

«Բայց ժամանակը չը ներեր, որ մանրամասնաբար գրեմ։ Եթէ մեր սիրտը և մեր նպատակը մէկ է՝ մանր մունր կարգաւորութիւններ դիւրին կըլլան։ Միայն մէկ բան կայ, որ շատ սիրելի պիտի ըլլայ, եթէ կրնայ ըլլալ—այսինքն, այս առաջիկայ կիրակի օր մեր պաշտօններ միացնենք կերպով մը, և կը յառաջարկեմ, որ առաւօտուն ժամը երեքին դուք մեր ժողովարանը գալով՝ հոն մեր ժողովուրդը ձեր ազգու խրատները լսէ, և իրիկուն ալ մենք ձեր եկեղեցին գալով՝ ձեր ժողովուրդը խրատնք տկարարար։

«Ցուսալով թէ այս առաջարկութիւնս ձեզի հաճելի պիտի ըլլայ՝ մնամ Քրիստոսով ձեր եղբայրը՝

Մ. Բ. Բարմելի

Տրապիզոն
1896, մայիս 28

Ահա պատասխանը.

Մեծարգոյ Մ. Բ. Բարմելի, Միսիոնար ի Տրապիզոն և այլն.

Սիրելի եղբայր ի Քրիստոս.

«Ստացայ ձեր ազնիւ գրութիւնը, լի եղբայրական սիրով և քրիստոնէական հոգւով. ուրախ եղայ մեծապէս։ Համամիտ եմ բոլորովին, թէ պէտք է ջանանք ի միասին, որ Տէրուն օրը սուրբ պահուի, որ սուրբ գրոց ընթերցումը ընդհանուր ըլլայ ժողովրդեան ամեն խաւերու մէջ։ Այդ է արդէն մեր նուիրական պաշտօնին պարտաւորութիւնը։ Աղօթենք, որ Ս. Հոգին արդիւնաւոր ընէ մեր ջանքերը մեր Տէր Յիսուս Քրիստոսի փառքին համար։

«Դպրոցներու զարգացման օգնելու համար պատրաստակամութիւն ցոյց տուած էք, շնորհակալութեամբ կընդունինք. երբ յաջողինք դպրոցիս բանալու, սիրայօժար պիտի օգտուինք ձեր եղբայրական յօժարակամութենէ։ Իսկ վերջին աղէտալի դէպքէն ի վեր ձեր ի գործ դրած պիսի դէպքերի համար կատարեալ բարերարութիւն կը լինէր։

Բայց այդ դեռ ոչինչ։ Գրքոյկի 131 երեսից մինչև 166 երեսը Քամալեան խօսում է հայ ժողովրդի Նաւասարդի մասին։ Այստեղ ահա մենք ներկայ ենք մի անզուսպ «հոգեւոր հրճուանքի»։ Ժողովրդասէր հեղինակը երեւակայել է, թէ ինքը միայն գիտէ, որ կայ ժողովրդի մէջ Նաւասարդ անունով ազն և չտապում է մի նոր կոլումբոսի դափնիներին արժանանալ։ Ինչեր և ինչեր չէ արել նա իր այդ երեւելի գիւտը անմահացնելու համար. որքան կուրիոզներ, որքան միամիտ և անմիտ բացականչութիւններ... Գովելով և փառաբանելով «օրհնեալ կորկոտը» և այլ ազգային «սրբազան կերակուրները», Քամալեան բաւական չէ համարել իր կուլինարական հրճուանքը արտայայտելով, այլ և ուզում է մի նոր, բուն հայկական Ցուլիոս Կեսար դառնալ և, առանց դէս ու դէնի, առաջարկում է տարվայ սկիզբը ածել ոչ թէ յունվարի մէկին, այլ Նաւասարդի օրը, որը չունի որ և է հաստատ ամսաթիւ։ Մենք ինայում ենք «Մշակի» էջերը, թէ չէինք կամենայ զրկել մեր ընթերցողներին ծիծաղի անսպառ նիւթից և մէջ կը բերէինք Քամալեանցի կուրիոզներից, ազգասիրական և ժողովրդասիրական զառանցանքներից գոնէ մի քանիսը։ «Սրբազան քեաչկայի» և «օրհնեալ կորկոտի» ոգեորված երկրպագուն չը գիտէ էլ Նաւասարդի ածանմբութեան մանրամասնութիւնները, բայց հաւատացած է ահա ինչի մէջ. «Նաւասարդը որ կայ, հայի կենդանութեան մասերից մինն է, եղունգ չէ, որ մարդ կարի և անհոգութիւնով դէն գցի, անգին զգայարանքներից մինն է. աչքի լոյսի հետ կարելի է միթէ խաղալ, անհոգ վարվել։ Ինչ կարիք կայ զանազան նոր տարիներ և ածանատներ փոխ առնել ուրիշներից, երբ մեր ազգայինն ունենք, որ հին է և ընտիր։ Միթէ կարիք կայ կամ խելօքութիւն է ամեն կէտում համակերպվել, դերի դառնալ ուրիշին»։

Ահա թէ ինչքան խելօք ու սրտացաւ է եղել պ. Քամալեան։ Ա՛յ, այ, այ։ Ջուրը եկել տարել է հայերին, եթէ չը լսեն Քամալեանին։ Մի ուրիշ տեղ (երես 143) նա ուղղակի յանդիմանում է, որ չենք համբուրում աւանդապահ հայ ժողովրդի «ոտքի տրեխը, Նրա կուղը»։ Մենք կարող ենք օգնել ժողովրդասէր Քամալեանին այդ ողբերի, այդ տագնապների մէջ։ Աւելի լաւ չէ՞ հագնել այդ տրեխը, չուխան, մօթալ փափախը, կապել կապոյտ գօտին, գլուխն ածիլել և մի փունջ մազ թողնել գագաթի վրա։ Փորձեցէք, պ. Քամալեան, գուցէ դրանով հովանայ ձեր սիրտը։

«Սև օրերից մինը» գրուածքը (50 երես) մի անհամ, ձանձրացուցիչ բան է. չը գիտես ինչ է դա. վէպ, հէքիաթ, պատմութիւն, առասպել։ Շատախօսութիւնը Քամալեանի հոգեհանն է։

Վերջացնելով մեր յօդուածը, ինչ լաւ բան ասենք պ. Քամալեանին։ Վատ չեն նրա ազգային առակները։ Ահա ինչ կարող ենք ասել։ Գրի առէք ժողովրդի պատմածները, արձանագրեցէք ձեր ականջի լսածը, բայց, ի սէր Աստուծոյ, ազատեցէք խեղճ ընթերցողին ձեր դատողութիւններից, ձեր բացականչութիւններից, հրճուանքներից և մանաւանդ... ձեր ռէֆօրմներից։

Լ.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Յունիսի 18-ին

Յունիսի 15-ին ամբողջ քաղաքում լուր տարածվեց, որ տեղակալ Երեմիա արքեպիսկոպոսը, Մեսրոպ վարդապետի ուղեկցութեամբ, Բաղուից գալիս է Շուշի։ Մեր թեմի կառավարիչ Սաթունեան վարդապետը, սրբազան հիւրին դիմաւորելու համար ընդ առաջ ուղարկեց պօստային երկրորդ Աղդամ կայարանը քաղաքիս և չրջակայքի երկու գործակալ քահանաներին, իսկ ինքը մի քահանայի և քաղաքի ականաւոր մարդկանցով ճանապարհվեց Խօջալլի կայարանը՝ ընդ առաջ։ Երէկ, ամսիս 17-ին, Երեմիա սրբազանը, կէսօրվայ ժամը մէկին հասաւ քաղաք։ Կոնսիստորիայի առաջ, չը նայած անձրեւային եղանակին, խմբված էր ահագին ամբոխ։ Սրբազան արքեպիսկոպոսը իջաւ առաջնորդարանում, և մի ժամից յետոյ տեղափոխվեց մի մասնաւոր տուն։ Լսում ենք, որ սրբազանը Ցաթևի վրայով ճանապարհվելու է Էջմիածին. այսօր մնայ երկու օր։ Սրբազանը այսօր այցելեց մեր եկեղեցիները։

Արցախեցի

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ

Յունիսի 14-ին

Այստեղի հայ ուսուցիչները իրանց «ռոճիկների վճարման» հարցը վերջնականապէս վճռել տալու համար՝ մի պատգամաւոր էին ուղարկել Կաթողիկոսի մօտ։ Այժմ այդ պատգամաւորը Էջմիածնից վերադարձել է, իր հետ բերելով երկու կոնդակ՝ մէկը մեր քաղաքի աղքատանոցի հոգաբարձութեան, իսկ միւսը ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխի անունով։ Այդ կոնդակներով Կաթողիկոսը հրամայել է աղքատանոցի հոգաբարձութեանը և յիշեալ երէցփոխին՝ որպէս զի դրանք իրանց տրամադրութեան տակ գտնված առձեռն գումարներ—(2000+1500 ռուբլի) փոխարինաբար տան դպրոցների հոգաբարձութեանը և ապա յետ ստանան եկեղեցիների եկամուտներից։ Այդպէս ուրեմն, ուսուցիչներին գուցէ աջողվի միանուագ ստանալ իրանց ռոճիկների մնացորդը՝ 5 ամսական, եթէ հոգաբարձութիւնն էլ իր կողմից մի փոքր ջանք գործ դնէ և լրացնէ պակասած գումարը։

Լսում ենք, որ մեր գաւառապետը դիմել է ուր հարկն է և խնդրել, որ Ալէքսանդրոպոլում մարդասիրութիւնը, պէտք է ի վերայ տանեաց քարոզուի՝ թէ ինչպէս անխտրաբար փութացած էք օգնելու և մխիթարելու արլածեալները։ Տրապիզոնի հայ հասարակութիւնը երախտապարտ մնացած է ձեզ և անմոռաց պիտի պահէ ձեր անունն։

«Գալով «առաջիկայ կիրակի օր կերպով մը մեր պաշտօնները միացնելու» առաջարկին, կը խնդրեմ հաճեցէք խորհիլ, թէ զայդ ընդունել իսպառ վեր է իմ ձեռնհասութենէս. ուր էր թէ հասած ըլլայինք այն բարեբաղդ օրուան, որ արդեքի միջնորմը բարձուած լինէր և հայ ազգը իր բազմապատիկ տառապանաց մէջ դէթ մխիթարութիւն ունենար տեսնելու իր բաժանեալ որդիքը իր մայրենի եկեղեցու ծոցը միացած։

«Ընդունեցէք իմ յարգանքներս, որով մնամ ի Քրիստոս եղբայր ձեր՝

Յովսէփ ծ. վ. Այվազեան

Տրապիզոն
1896, մայիսի 28

—

Հոս թէև արիւնհեղութիւնները դադարած են առժամապէս, բայց կողոպուտի կարգը հասած է յոյներու գլխին, որք Կերիտի մէջ պատահած դէպքերէն սարսափահար՝ ինչ ընելին չեն գիտեր. յոյն երիտասարդներ ալ չարունակ փոքոցներու մէջ կենթարկուին կոպիտ խուզարկութիւններու։ Յոյն գիւղացիք ալ տաճկական չահատակութիւններէ զուրկ մնացած չեն, այնպէս որ մօտերքս քառասուն տնոր ստիպուած եղան գաղթել արտասահման։ Իսկ անդին Սիրմէնէյի երես առած աւազակներն ալ սկսած են կողոպտել իրենց իսլամ կրօնակիցներն.—ամեն տեղ տաճիկ պաշիպոզուք ժողովուրդը զինված պատրաստ է, իսկ քըրսէլդարիներն ալ աւելցած են այնքան՝ քան երբէք. արեան հոտը կառնուի, և երբ արդի մոխրակոյտերն դարձեալ կարմիրով ներկուին՝ այն ատեն խաղաղութիւնը «ազատները» պիտի վայելեն արդեօք։

Կմախք դարձած հայ գիւղացին չուարած է. դեռ արտը չը ցանած ստիպված է վճարել տասանորդի տուրքը.—հարկահաւաքները այժմ անխնայ կոտորած մը կուտան հաւերուն, չինականի հարստութեան վերջին այն չառաւիղին, որոց ածած ձուերով կարող կըլլար երբեմն բուռ մը աղ ձեռք բերել։

Կարին տեղացած կարկուտի տարափը բաւական մեծ վնասներ պատճառած է հոն։ Հայ բոլիս մ'ալ վիրաւորած են. յուզմունքը մեծ է. 20 հայեր ձերբակալած են։

Պիթլիսի միսիոնար մտոր Նիֆի և մտոր Քոլի ընտանիքները այս չաբաթ հոս հասան. մէկ մասը մեկնեցաւ Ամերիկա, մնացածներն ալ ճանապարհ կիյնան 4—5 օրէն տեղւոյս միսիոնար Մ. Բ. Բարմէլիի ընկերակցութեամբ. իր տեղը եկած է մտոր Քրօֆըրտ։

Տ—ի

ինքնավարութիւն չը մտցնվի, որովհետև քաղաքը աղքատութեան պատճառով չէ կարող հոգալ նրա ծախսերը։

Քաղաքացի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վրաց ազնուականների կալուածական բանկի անդամների արտակարգ ընդհանուր ժողովը այս անգամ բոլորովին տարբերվում է անցեալ ժողովներից։ Այս անգամ մեծամասնութիւնը ճավաձէի կուսակցութեան կողմնակիցներն են կազմում, որոնք և ձայների անգին մեծամասնութեամբ վճռում են քուէարկութեան դրված հարցերը, առանց աղմուկի, առանց յուզմունքի։ Այդ «հանդարտ ընթացքին» քիչ չը նպաստեց, ի հարկէ, իշխան Մուխրանսկու յայտարարութիւնը, որը նա արեց յունիսի 19-ին, երբ ընտրվեց նախագահ, նիստը բանալու բոլորին։ Իշխանը յայտնեց, որ աղմուկ և անկարգութիւն առողները կը հեռացնվեն ոչ միայն ժողովի դահլիճից, այլ և քաղաքից... Ժողովը ոչ միայն ապօրէն ճանաչեց նախկին ժողովի ձեռքով կատարված ընտրութիւնները, այլ և որոշեց իիտ յանդիմանութիւն անել Ի. Մաչաբէլիին։ Սակայն դժուար թէ Մաչաբէլիի հեռանալով, բանկի գործերը կանոնաւոր ընթացք ստանան, որովհետև «մաչաբելիանները» յայտնեցին ժողովում, որ նրանք պէտք է բողոքեն մինիստրին ներկայ ժողովի վճիռների դէմ։

—

Ներկայումս կազմվում է պատժական օրէնքների (Уложеніе о наказаніяхъ) նոր ծրագիր։ «Церковный Вѣстникъ» լրագիրը հաղորդում է, որ նոր ծրագրով օրինական են համարվում հետևեալ տեսակ ամուսնութիւնները. հօր և որդու՝ մօր և աղջկայ հետ. հօր և որդու՝ երկու քոյրերի հետ. մօր և աղջկայ՝ երկու եղբայրների հետ. երկու եղբայրների՝ երկու քոյրերի հետ. մի մարդու՝ երկու քոյրերի հետ հետեղաբար. հարազատ հօրեղբօր կամ մօրեղբօր (дядя)՝ եղբօր կամ քրոջ աղջկայ հետ (племянница)։ Այդպիսով, եթէ հաստատվի նոր օրինագիծը, ամուսնական գործերի մէջ անհամեմատ մեծ ազատութիւն կը մտցնվի, քան որքան կար մինչև այժմ։ Սակայն ռուս կրօնական թերթը գտնում է, որ այդ ազատութիւնները հակառակ են եկեղեցական իրաւագիտութեան։

—

Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութիւնը, ցանկանալով օգնել մեր չերամապահներին՝ տեղեկութիւն ունենալու, թէ ինչ գներով է ծախվում բոժոժը արտասահմանում, դիմել է Թիֆլիսի ֆրանսիական և օսմանեան հիւպատոսներին, խնդրելով նրանց աջակցութիւնը այդ գործում։ Ֆրանսիական հիւպատոսի դիմումի հիման վրա, Լիոնից հեռագրում են, որ յունիսի 13—14-ին (նոր տօմարով յունիսի 25—26-ին) Սեվանում բոժոժի կիլոգրամը արժէր 2³/₄—3 ֆրանկ, իսկ ուրիշ տեղերում՝ 2 ֆրանկ 40 սանտիմից մինչև 2 ֆր. 60 սանտիմ, կամ հաշվելով ֆրանկը 36 կոպ., պուդը 15 ր. 15 կոպ.—15 ր. 35 կոպէկ, և 16 ր. 23 կ.—17 ր. 71 կ.։ Այդպէս են բոժոժի գները Ֆրանսիայում վերջին տեղեկութիւնների հիման վրա։

—

Երէկ կարդացինք Թիֆլիսի հայոց փողոցային թերթերից մէկի մէջ երկու լուր, որոնք վերաբերում են մի չատ բարձր դիրք ունեցող հոգևորականի և մասնաւոր անձանց ընտանեկան պատմին։ Որն է այդ թերթը, դժուար չէ հասկանալ, բայց թէ ում են վերաբերում այդ զզուելի ակնարկները, յիշատակել չենք կարող,—դա դէմ է մարդկային զգացմունքին, պատի տարրական պահանջներին։ Պէտք է խոստովանենք, որ հայոց մամուլի ամենակեղտոտ օրգաններից անգամ մենք չէինք սպասում այդ աստիճան անվայել, լիրբ և զզուելի ակնարկներ։ Ամօթ այդ մամուլին, ամօթ այն շրջանին, ուր գոյութիւն ունի այդ տեսակ մամուլ։

—

Նորերս Կազանում տեղի ունեցաւ մի գիտական-հասարակական մեծ ժողով, որին մասնակցում էին գիտութեան, զեմստվոների և քաղաքների ներկայացուցիչները՝ մշակելու միջոցներ դիֆտերիտի դէմ։ Ժողովում պարզվեց, որ չիջուկով բժշկվելը պակասեցրել է մեռնողների թիւը 14 %-ով։ Ժողովը որոշեց հիմնել բակտերիոլոգիական մի հիմնարկութիւն Կազանում։

—

Թիֆլիսի քաղաքային խորհրդի կողմից ընտրված յանձնաժողովը, որ պէտք է քննի հեղեղներից վնասված ընտանիքներին նպաստ հատկացնելու խնդիրը, այցելեց Սաղի թաղը և տեղն ուտեղը ծանօթացաւ աւերմունքների և վնասների հետ։ Այդ քննութեան միջոցին ի միջի այլոց պարզվեց, որ մի քանի ունևոր անձեր խնդիրք են տուել նպաստ ստանալու համար բոլորովին անարդար կերպով։ Այդպիսիներին յանձնաժողովը մերժեց որ և է օգնութիւն տալ։

—

Կաթնատնտեսական ցուցահանդէսի բացումը Թիֆլիսում նշանակված է ներկայ տարվայ հոկտեմբերի 6 ին։ Ցուցահանդէսը պէտք է չարունակվի մի չաբաթ կամ տասն օր։

—

Կովկասի կառավարչապետի օգնական կոմս Ցատիչչէվ «Тифл. Листокъ» լրագրի խօսքով, ներկայ ամսի 20-ից արձակուրդ առնելով, գընում է Ռուսաստանի ներքին նահանգները։

—

ԵՐԵՒԱՆԻ նահանգում հեղեղները ջրի տակ թողին Երևանի գաւառի և Շարուրի մի քանի գիւղերը։ Նորագաւիթ, Ուլուխանլու և ուրիշ գիւղերում երկրագործները ստիպված էին մի քանի անգամ ցանքս անելու, որովհետև հեղեղները կրկնվեցին և վնասեցին արտերը և բոստանները։

—

ՂԱԶԱԽԻ գաւառից հաղորդում են, որ թուրք ռէֆօչչիկեար գիւղում անառակների մէջ երևացել է վարակիչ հիւանդութիւն։

—

ԳՕՐՈՒ գաւառից հաղորդում են, որ լեռնային մասերում արտերը լաւ վիճակի մէջ են, իսկ տափարակ տեղերում մասամբ վնասվել են յորդ ջրերից։

—

ՂԱԶԱԽԻ գաւառի Կարմիր-Աղբիւր գիւղից հաղորդում են, որ չերամի որդի մեծ մասը փչացել է ցրտերի և անձրևային եղանակի պատճառով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Վանի դէպքերի մասին «Temps» լրագրի Կ. Պոլսի թղթակիցը հետևեալ մանրամասնութիւններն է հաղորդում։ «Վան քաղաքում թիւրքերը ապրում են բերդում, բլուրի վրա, իսկ հայերը հարթավայրում, գեղեցիկ այգիների մէջ։ Մի քանի ժամանակից ի վեր հայերը, երկիւղ կրելով քիւրդերի աւարառութիւններից, ձեռք են բերում զէնք բաւական մեծ թիւով (ըստ երևոյթին Պարսկաստանում) և կազմում են «Ղաչաղ» ընկերութիւնը ինքնապաշտպանութեան նպատակով։ Ընկերութիւնը իրան նպատակ է դնում իր սեպհական ջանքերով ձեռք բերել այն, ինչ որ անիրագործելի համարվեց Եւրոպայի օգնութեամբ։ Կռիւը թիւրքերի հետ սկսվեց գիշերը այգիներում. յայտնի չէ, ով առաջ կրակ արեց, թիւրք պահակները թէ հայերը։ Նահանգապետը զօրք ուղարկեց հայերի դէմ. այդ զօրքին միացաւ Վանի մահմետական ազգաբնակութիւնը։ Այգիները պայարեցին և ամեն մի հայ տուն դարձաւ պայարված ամրոց։ Սպանվածների և վիրաւորվածների թիւը ստուգապէս յայտնի չէ։»

—

«Temps» լրագիրը ասում է. «Խռովութիւնները Վանում ցոյց են տալիս, որ մարքերի լարումն այդ չարաբաստիկ երկիրներում ամենևին չէ թուլացել և այդտեղի մթնոլորտը նոյնչափ լցված է էլէքտրականութեամբ, ինչպէս անցեալ աշնան։ Բացի դրանից թիւրքաց իշխանութիւնները, մասամբ իրանց սեպհական մեղքով փակված են դիւթական շրջանի մէջ։ Այդ հեռաւոր նահանգներում կարգը պահպանելու համար սաստիկ զինաւորված ոյժ է պահանջվում, իսկ միւս կողմից ոչ մի բան այնքան չէ նպաստում մրքերի յուզման և կրքերի գրգռման, ինչպէս պահապան զօրքի թիւը աւելացնելը։ Փոքրիշահի զինուորների մէջ հայերը տեսնում են ոչ թէ իրանց կեանքի և գոյքի պահապաններ, այլ մեղսակիցներ, եթէ ոչ ինքնիշատչներ այն կոտորածների, որոնք տեղի ունեցան անցեալ տարվայ խռովութիւնների ժամանակ։ Վանում, ինչպէս ասում են, կայ միայն երկու բատալիոն չատ թոյլ կազմութեամբ։ Այդպիսի պայմանների մէջ դժուար է, ի հարկէ, պահպանել խաղաղութիւնը, բայց եթէ այնտեղ աւելի բազմաթիւ զօրք լինէր, այդ բաւական կը լինէր սարսափ ազդելու քրիստոնեաների վրա և առաջ բերելու գուցէ նոր ընդհարումներ։»

—

Պետերբուրգի թիւրքաց դեսպանութիւնը տպել է «Новое Время» լրագրում հետևեալ հաղորդագրութիւնը(?)։ «Ներքին գործերի մինիստրութեան Սիվասի ընդհանուր նահանգապետից ստացած հեռագրից երևում է, որ հայ ագիտատոր Բաղդասարը, որ յեղափոխական մանիֆեստների անգամ էր Մարսուանում, ձերբակալվեց իր բնակարանում, և այդ ժամանակ նրա մօտ գտնվեց երեք արկղ դինամիտ։ Տեղական իշխանութիւնների ձեռքով կատարած քննութիւնից երևաց, որ այդ արկղերը պատրաստել էր անձամբ Բաղդասարը Մարսուանում, ուր նա դարբնոց ունէր։»

—

Ռուսաց հեռագրական գործակալութիւնը հաղորդում է մայրաքաղաքի լրագիրներին, որ Շիչլի արուարձանում զինուորները յարձակվեցին երեք լուսաւորչական կայսերի վրա և նրանց բռնադարձրեցին։

—

Ռուսաց գործակալութիւնը հաղորդում է, որ թիւրքաց կառավարութիւնը հերքում է(?) Էրզրումի և Ալեպոյի մօտ եղած նոր խառնակութիւնների լուրը։ Վանի խառնակութիւնները բոլորովին ճնշված են(?)։ Անատոլիայում հանգստութիւն(?) է տիրում։

ԿՐԷՏԷ ԵՒ ՑՈՒՆԱՍՏԱՆ

—

Ցունաց մինիստր-նախագահ Դէլիանիսը մի խօսակցութեան մէջ, որ ունեցել է «New-York-Herald» լրագրի թղթակցի հետ, ահա թէ ինչ կարծիք է յայտնել կրէտական հարցի մասին։

«Կրէտական հարցը—ասաց Դէլիանիսը—Ցունաստանի ամենաբարդ հարցերից մէկն է։ Կղզու վրա ապրող 300,000 քրիստոնեաները բոլորն էլ յունական ծագումից են։ Մի քանի տարի առաջ նրանց թիւը 500,000 էր, բայց թիւրքական բէժիմը և ապստամբութիւնները փոքրացրին այդ թիւը։ Այժմեան չարժումը կարող է անընդհատ չարունակվել, եթէ կրէտացիները ունենան ուտելիքի և ռազմամթերքի բաւականաչափ պաշար։ Իմ կարծիքով, յաղթող հանդիսանալու չանսը կրէտացիների կողմն է։ Ցունաց կառավարութեան դրութիւնը վերին աստիճանի փափուկ և դժուար է։ Մենք պէտք է խափանենք ժողովրդական կրքերի պայթիւնը, բայց մենք ապրում ենք սահմանադրական բէժիմի հովանաւորութեան տակ, իսկ այդ բէժիմը իրաւունք է տալիս ժողովրդին պահանջել, որ նրան լսեն և հասարակական կարծիքը կարող է ստիպել, որ իրան յարգեն։ Ցոյն ազգը, սկսած ամենաբարձր դասակարգից մինչև ամենաստոր դասակարգը, պահանջում է, որ մենք օգնենք կրէտացիներին։ Նա ամբողջ հոգով ձգտում է միացնել Կրէտէն Ցունաստանի հետ և իրանք կրէտացիները նոյնպէս սաստիկ փափագում են, որ իրանց կղզին Ցունաստանի մասը դառնայ։ Ապստամբութեան պատճառները այնքան ակներև և բազմաթիւ են, որ ես մտածել անգամ չեմ կարող անգլիական ազդեցութեան մասին։ Ամենից առաջ Կրէտէում օտարական պաշտօնեաների մի ստուար քանակութիւն ամբողջ երեք տարի ոռճիկ չէ ստացել։ Բացի դրանից ժողովուրդը հաստատում է, որ նրանից խլում են իրան պատկանող փողերի մի մասը և ուղարկում Թիւրքիա։ Վերջապէս նրան տրված խոստումները չիրագործվեցին։ Կրէտէից մեզ մօտ փախչող անձանց թիւը հետզհետէ չատանում է։ Երէկ ես ստիպվեցի ստորագրել 300,000 ֆրանկի կրէդիտ այդ թշուառներին օգնելու համար։ Ինձ թվում է, որ այժմ բոլոր քրիստոնեայ պետութիւնները պէտք է խորին համակրութիւն զգան դէպի յոյները և կրէտացիները և ենթադրում եմ, որ մենք, յոյներս, նոյնքան իրաւունք ունենք սպասել այդ համակրութիւնը նրանցից, որքան կրէտացիները իրաւունք ունեն սպասել մեզանից։ Բայց այնու ամենայնիւ պետութիւնները ձեռքերը ծալած հանդիսատես են քրիստոնեաների կոտորածին թիւրքերի ձեռքով։»

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թավրիզ, յունիսի 5 ին

Եթէ հաստատք մեզ հասած լուրերին, սահմանագլխի Շիկակ ցեղին պատկանող քիւրդերն էլ պատրաստութիւններ են տեսնում յարձակվելու Սալմասի և Ուրմիայի վրա և դրա համար զէնքեր են ժողովում։ Այդպէս, մօտ օրերս Ուրմիա են գալիս այդ ցեղին պատկանող 8 քիւրդեր և ահագին քանակութեամբ զէնքեր գընելով, վերադառնում են իրանց երկիրը։ Կառավարութիւնը այս բանը իմանալով՝ անմիջապէս ձերբակալում և կրկին Ուրմիա է տանում։ Քննութիւն է նշանակված։

Մայիսի 30-ին, այստեղի հայերը, առաջնորդութեամբ վոխանորդ հօր, ներկայացան նոր մուշտէյիդին, շնորհաւորելու նրա գալուստը։ Այդ հոգևորականը, որ մի լուսամիտ մարդ է, իր խորին ցաւակցութիւնը յայտնեց Հայաստանում տեղի ունեցած կոտորածների առիթով և ասաց. «Մեր սիրելի հիւր հայերը մեծ կորուստներ ունեցան. մեր պարքն էր «թագիա» (սուգ) պահել նրանց համար, բայց մեր երկրի դրութիւնը թոյլ չը տուեց։ Ես պատրաստ եմ միշտ ձեր կարիքներին բաւականութիւն տալու և աւելի լաւ պահպանելու, քան իմ հանգուցեալ հայրը։ Մի քանի անգամ հայերն ուզեցին հեռանալ. բայց մուշտէյիդը չը թողեց և չարունակեց իր քաղցր խօսակցութիւնը։

Թաւրիզը բաղդ ունեցաւ մի ուրախութիւն ևս վայելելու. մայիսի 27-ին սադրազամի հեռագիրը հաղորդեց, որ Պարսկաստանի գահաժառանգ և Ադրբէյջանի վալի-ադ է նշանակվել ու ճանաչվել Շահի անդրանիկ որդին՝ Էյտէսար-Սալթանէ, որ 24 տարեկան է։ Հեռագիրն ստանալուն պէս վալի-ադը 3—4000 թուման բաժանեց չքաւորներին։ Այժմ Թաւրիզը նորից սուգի մէջ է։ Կատարվում է Մահառլամի սուգը։ Այդ մասին յաջորդ նամակով։

Աբրաւագդ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Neue Freie Presse» լրագրին հեռագրում են Հռոմից, որ յունիսի 10 ին Լէոն XIII պապը մի ճառ արտասանեց կոնսիստորիայում արևելեան եկեղեցիները հռոմէական եկեղեցու հետ միացնելու մասին, պապի գահերէցութեան պայմանով։ Շուտով կը հրատարակվի պապի կոնդակը այդ հարցի մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ԳՐՈՂԻ ՕՐԱԳԻՐԸ

—

Նշանաւոր մարդ է, անկասկած, Սուվորին։ Նա յայտնի է ամբողջ Ռուսաստանում, իր ձեռքում ունի մի այնպիսի զօրեղ, տարածված օրգան, ինչպէս «Новое Время», նրա խօսքը կարդում են միլիոնաւոր մարդիկ, նրա կարծիքին ականջ են դնում հազարաւորներ։—Բայց իր այդ «զօրութեան» մէջ նա չատ անգամ գտնում է այնքան պատիկ, այնքան թոյլ, և այնքան խեղճ, որ մեզ նման հասարակ մահկանացուներն անգամ, ընթերցող, ստիպված են լինում խղճալ նրան, ցաւել նրա մասին։ Գիտէք երբ, ինչ դէպքերում։ Այն ժամանակ, երբ այդ յետադէմ ռուս հրապարակախօսը չաբաթներ և ամիսներ հայհոյելուց, յարձակվելուց, տակն ու վրա անելուց յետոյ, յանկարծ, ով գիտէ ինչ քամու ազդեցութեան տակ, մի վայրկենում խօսքը փախսում է, սկսում է աստուածացնել այն, ինչ որ երէկ ցեխի մէջ էր կոխում, և պաշտպանել նրանց, որոնց համարում էր արժանի ոչնչանալու, սատանայի փայ դառնալու...

Այդ անվերջ, յաջորդական այլակերպութեան, փոփոխամտութեան ժամանակ գրողը, հրապարակախօսը նման է ոչ թէ հաստաքուն կաղնիին, որ վիթխարի նման իր կուրծքը դէմ է տալիս կատաղի փոթորկին, որ կողմից և փչէր նա, այլ ճկուն, ամեն կողմ թեքվող եղեգնին, որին քամու իւրաքանչիւր հոսանքը թեքում է մի այս, մի այն կողմը, և դիտողը՝ սրատարսի, խղճալով նայում է, թէ՝ ահա, այս բոպէիս կը կարվի...

Խղճում եմ այդ տեսակ եղեգն-գրողներին, որոք թեքվում, կռանում են քամիների առաջ, և չատ անգամ էլ չը դիմանալով քամու հոսանքին, կտրվում, միջից կէս են լինում, և իբրև մի անպէտք փայտի կտոր, ընկնում քամու, կամ ջրի բերանը, և գնում այնտեղ, ուր տանում է փողոցում փչող քամու հոսանքը, կամ վազող ջրի ընթացքը...

Ժամանակակից հրապարակախօսական դպրի

վրա, առհասարակ, չատ քիչ են նկատվում կաղնիի նման ամուր, չընկճվող, փոխարինկներին դիմադրող գրողներ. մեծագույն մասը, գուցէ նույն իսկ ամբողջութիւնը, սկսած ամբողջ Ռուսաստանին յայտնի Սուվորիններից մինչև փոքրիկ հայ հասարակութեան միայն ծանօթ զանազան խմբագիրները ոչ այլ ինչ են, եթէ ոչ զբական եղեգներ, որոնց ուղղութիւն տուողը, պատահական հոսանքը, փոփոխական քամին է...

Ես և դուք, ընթերցող, մեր անսնան տեղով, մեր հասարակ մակկանացութեամբ հանդերձ,— մի քանի մէջ կատարեալ իրաւունք ունենք՝ խղճալ այդ գրական-եղեգներին...

—

P. S. Այդ գրական եղեգներից մէկը, հայկական ամենամեծ սօփեստը (որ թարգմանի Աւետիք Արասխանեան) իր երեսի «Մուրճի» վերջին համարում, ընթերցող, նուիրել է հայոց հարցին, երևակայեցէք, 8 երես, իսկ խաչատուր Մալումեանին—28 երես:

«Այրված սրտին մխիթարութիւն» է դա, գիտենք, բայց չէ կարելի հերքել որ դա մի և նույն ժամանակ մի զօրեղ ապացոյց է, որ յիրաւի «Մուրճը» միանգամայն «կանգնած է իր հասարակական կոչման բարձրութեան վրա»: Խոստովանում ենք:

Գրող

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 20 յունիսի: Բէյխստագն ընդունեց, 222 ձայների մեծամասնութեամբ 48-ի դէմ, երրորդ ընթերցման ժամանակ քաղաքացիական օրէնսդրութիւնը:

ՄԷՑ, 20 յունիսի: Յունիսի 18-ին երեկոյեան 7 ժամին այրվում է ցէխհաուզը: 7¾ ժամին պայթիւն տեղի ունեցաւ:

ՄԷՑ, 20 յունիսի: Սպանված են երկու ունտէր-օֆիցէրներ, երկու քաղաքացիներ, մի երեխայ, վիրաւորված են 14 մարդիկ:

ԲԵԼԳՐԱԴ, 20 յունիսի: Կոնցէրը զինուորական ժողովարանում կատարելապէս աջողվեց: Թագաւորը, թագուհին և իշխանը եկան 4 ժամին: Երեկոյեան 8 ժամին իշխան Նիկոլայ ճանապարհ ընկաւ Վիէննա: Ճանապարհ էին գցում իշխանին՝ թագաւորը, մինիստրները, ռուսաց զինուորական գործակալը, թագաւորի զինուորական սվիտան: Մեկնելուց առաջ իշխանը խօսակցեց թագաւորի հետ: Հրաժեշտի ժամանակ նրանք երեք անգամ համբուրվեցին: Փողոցներում ժողովուրդը ճանապարհ էր գցում իշխանին «ժիվիո» աղաղակներով:

Կ. ՊՕԼԻՍ, 20 յունիսի: Կանխից հաղորդում են, որ հինգշաբթի օր, Բուկրլիէսի շրջակայքում տեղի ունեցաւ տաք կռիւ քրիստոնեաների և թիւրքաց կանոնաւոր զօրքի մէջ: Վերջինները յետ քաշվեցին:

ՆԻՒ-ԵՕՐՔ, 20 յունիսի: Յունիսի 19-ին վախճանվեց տիկին Բիչեր-Ստոու, «Թոմաս եղբօր տնակի» հռչակաւոր հեղինակը:

ԼՕՆԴՕՆ, 21 յունիսի: «Times» լրագրի ստացած տեղեկութիւնների համեմատ, որոնք վերաբերում են Խօարանում տեղի ունեցած ապստամբութեանը, 600 հոգուց բաղկացած զօրաբաժնի վրա—որ ուղարկված էր ապստամբութիւն առաջացնող դրուշների խմբերի դէմ հրամայելով պատժի ենթարկել նրանց,—էլսուվէյդոնի մօտ ապստամբները յարձակում գործեցին, որի ժամանակ 450 մարդիկ սպանվեցին, իսկ 159 հոգի գերի առնվեցին:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ. Դ. «Մահապարտը և քահանան» լոյս չի տեսնի:

ԹԻՖԼԻՍ. «Հօրիզոնի» հրատարակիչ Փ. Վարդապետեանին: Վարնայի Սիսակեան ընկերութեան ընթերցարանը խնդրում է ուղարկել մի օրինակ ձեր հանդէսից:

Կ. ՊՕԼԻՍ. Պարէտ Արբակեան. «Կ. Պոլսի աղդապաւ քլիգ» վերնագրով ձեր յօդուածը անկարող ենք տպագրել:

ՄԵՂՐԻ. Ա. Ձեր ուղարկած պատկերը լոյս չի տեսնի: Շարունակեցէք գրել:

ԹԻՖԼԻՍ. լուսանկար Տէր-Ղևոնդեան. Ամերիկայից ստացել ենք մի պարտնից 4 դոլլար և մի ուրիշ պարտնից 1 դոլլար՝ որով խնդրում են ուղարկել հայ գործիչների պատկերներ: Բարեհաճեցէք ստանալ և ուղարկել:

ՊԱՐԻԶ. Հայ ուսանողներին: Յաւում ենք, որ անկարող ենք ձեր առաջարկած բրոշիւրը տարածել մեր բաժանորդներին:

ՊԵՏՐՕՎՍԿ. Հ. Թոխասեան. 1 ր. 25 կոպէկ յանձնեցինք կենտրոնական գրավաճառանոցին՝ ձեր խնդրած գրքերը ուղարկելու համար:

ՍԵՒ ՔԱՂԱՔ. Մ. Մարտիրոսեանց: Պոստով ստացած բաժանորդագնի համար խմբագրութիւնը անդորրագիր չէ տալիս: Բուսական է որ դուք ունէք պօստի անդորրագիրը:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

Կին-բժիշկ ԴՈՒՆԱՅԵՎԱ-ՐՈՒԴԵՆԿՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ. և շաբաթ:

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մարթի հ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ

Լոյս տեսաւ
ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑԻ
ՌՈՍՏԱՄ ԵՒ ՍԱԼՄԱՆ
Գիրք:
ԳԻՆԸ 25 ԿՈՊԷԿ:
Դիմել գրավաճառներին: (№ 71) 2—3

Լոյս տեսաւ
Վ. ԱՉԱԳԱՆԻ
ՀԵՆՐԻԽ ՊԵՍՏԱԼՕՑՅԻ
Գիրք:
ԳԻՆԸ 30 ԿՈՊԷԿ:
Դիմել գրավաճառներին: (№ 71) 2—3

ՄՕՍԿՎԱ ԵԿՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

քաղաքի կենտրոնում, Բոլշայա Դմիտրովկա (Большая Дмитровка) փողոցի վրա տրվում են

„ՎԵՐՍԱԼ"

Շքեղ կերպով կահաւորված ՀԱՄԱՐՆԵՐ: Բնակվողների համար կան ամեն տեսակ յարմարութիւններ՝ ՏԷԼԷՖՕՆ, ՎԱՆՆԱ. ստացվում են ՀԱՅՈՑ և ՌՈՒՍԱՅ լրագիրներ և այլն: ԳՆԵՐԸ ՁԱՓԱՒՈՐ ԵՆ:
8—20 (№ 62) Բ. ԱՒԵՏԻՍԵԱՆՑ

Կազանի համալսարանի 4-րդ կուրսի **ՄԻ ՈՒՍԱՆՈՂ** ցանկանում է դասեր ունենալ չափաւոր գնով: Պատասխանները խնդրվում են հասցէն. Вера, Ольгинская ул. д. Теріева, Кв. Доктора Кананова. (№ 68) 2—4

Լոյս տեսաւ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆՑԻ
„BAIATHI SCHIRAZ"
ԲԱՅԱԹԻ-ՇԻՐԱԶ
Երրորդ աչխատութիւն
Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Սուզանճեանի, Լանկոյի և Ֆարինայի մագազիններում:
ԳԻՆԸ 60 ԿՈՊ.
Ցիչեալ մագազիններում գտնվում են նույն հեղինակի
ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԳԵՐ և ՊԱՐԵՐ, գործ I. 80 կ.
«ԲԱՅԱԹԻ-ԲԻԻՐԴ» » գործ II. 60 կ.
(№ 69) 2—5

„УРБЕНЪ" „L URBAINE"

կեանքի ապահովագրութեան ՈՒՐԲԷՆ ֆրանսիական ընկերութիւնը

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ԴԷՊ ՄԱՀՎԱՆ, ՊՐԷՄԻԱՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՒ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԿԱՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԸՆԴՈՒՆԱԿ ԼԻՆԵԼՈՒ ԴԷՊՔՈՒՄ ԱՐՏՕՆՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱԼՈՒՆ:

ՕՐԻՆԱԿ 25 տարեկան անձը, որը այս տարիքով ապահովագրվել է 10,000 բուբլով 25 տարի պրէմիա վճարելու պայմանով, պէտք է իւրաքանչիւր տարի մոցնի 25 տարի շարունակ 370 ր. 20 կոպ.: Պրէմիա վճարելու ընթացքում հիւանդութեան դէպքում, ապահովագրվողը ազատվում է որոշ ժամանակում վճարելի գումարի մոցնելուց մինչև կատարելապէս առողջանալը և այդ գումարները յետոյ չեն պահանջվում: Իսկ ապահովագրվողի մահվան դէպքում այդ ժամանակվայ ընթացքում 10,000 ր. գրամագլուխը անյապաղ վճարվում է:

Իսկ եթէ ապահովագրվողը 25 տարվայ ժամանակամիջոցը անցկացնի, այն ժամանակ Ընկերութիւնը պարտաւոր է՝

1) տալ նրան ապահովագրված գումարի 5%, այսինքն 5,000 ր. առձեռն:

2) թողնել նրա մօտ բացի գրանից 10,000 բուբլու պոլիս մահվան դէպքում, որպէս կատարելապէս վճարված, և

3) թոյլ տալ նրան ապա մասնակցութեան իրաւունք Ընկերութեան օգուտների մէջ, որը կը տայ ապահովագրողին իւրաքանչիւրամեայ կենսաթոշակ:

ԳԼԽԱՒՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ Անդրկովկասի և Անդրկասպիի համար՝ ՊՕԼԱԿ և ԸՆԿ. Թիֆլիս, Սօլօլակ փող. № 7.

ԳԼԽԱՒՈՐ ՏԵՍՈՒՉ Բագրատ Գերասիմովիչ Տէր-Մախէուզով:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱԼ Ա. Բ. Վէյս. ԹԻՖԼԻՍ—Գանօվսկայա 7, և Բաքու, Օլդինսկայա, տ. Շադլդանովի:

Տեղեկութիւնները և բրոշիւրները տալիս են ընկերութեան ագէնտները կայարութեան բոլոր քաղաքներում: (ամս. 10,25) 1—16

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ, ընտրողական ժողովներին նախագահողի յանձնարարութեամբ, պատիւ ունի յայտնել 2-դ ԿԱՐԳԻ անդամ-փոխատուներին, որ այս յունիսի 16-ին սկսված նիստի շարունակութիւնը՝ լիազօրներ ընտրելու համար, ՆՇԱՆԱԿՎՈՒՄ Է ՇԱԲԱԹ ՕՐ, ԱՅՍ ՅՈՒՆԻՍԻ 22-ԻՆ, ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՄԻ 7-ԻՆ, Թիֆլիսի ժողովարանի դահլիճում:
1—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է ՄԻ ՀՄՈՒՏ ՎԱՐԺՈՒՀԻ.

Բեսսարաբիայի Օրհէյ քաղաքում (նահանգական Քիշինեվ քաղաքից 40 վերստ հեռու) երկու երեխայ պատրաստելու համար—մինը Լազարեան ճեմարանի պատրաստական դասատան, և միւսը գիմնազիայի առաջին դասատան: Տարեկան ռոճիկ 300 բուբլի, քնակարան և ապրուստ. ճանապարհածախս առանձին: Մանրամասնութիւնների մասին դիմել՝ պ. Յովհ. Սպենդիարեանին. Վօդվօզնի փողոց, տուն № 12. 2—3 (№ 71)

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՏԱՐԻՑ

Ներկայ տարվայ երկարատև չրառատութիւնը մի քանի մեծ հեղեղումների հետ միասին Պէսկովսկայա և քաղաքի ուրիշ ստորին մասերի աղդաբնակութեանը ահագին վնասներ պատճառեց, որի ժամանակ ամենաչքաւոր քաղաքացիներից շատերը զրկվեցին իրանց ամբողջ ունեցածից:

Գիտենալով Թիֆլիս քաղաքի աղդաբնակութեան պատրաստականութիւնը օգնութեան իւրաքանչիւր գործում, Քաղաքային Դուման որոշեց Քաղաքային Վարչութեան կից հանգանակութիւն բանալ յօգուտ հեղեղումներից վնասված աղքատների:

Նուիրատուութիւններն ընդունվում են Քաղաքային Վարչութեան մէջ ամեն օր մինչև ցերեկվայ 2 ժամը: (№ 70) 3—6

Ի ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ և իմէրէթի նշանակեալ է ածուրդ ի 28 այսր յունիսի ի 12 ժամու աւուր առանց կրկնաձրդի վասն տալոյ ի վարձու զատուն մայր Աթոռոյ որ ի Կուկիա՝ ի Սիմոնովսկի փողոցի. ուստի ցանկացողք կարեն դիմել ի կօնսիստորիայն ի նշանակեալ ժամուն հանդերձ դրաւականօք:
3—3 (№ 70) Անդամ կօնսիստորիայի՝ Գաբրիէլ քահ. Տէր Գաբրիէլեանց

Ի ԿՕՆՍԻՍՏՕՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՎՐԱՍՏԱՆԻ և իմէրէթի նշանակեալ է ածուրդ ի 26-ին այսր յունիսի ի 12 ժամու աւուր առանց կրկնաձրդի վասն տալոյ ի վարձու զերկուս կրպակս Մայր Աթոռոյ հանդերձ նկուղիւ, որ յԱբասաբատակի հրապարակի, ուստի ցանկացողք կարեն դիմել ի կօնսիստորիայն ի նշանակեալ պահուն հանդերձ դրաւականօք:
3—3 (№ 70) Անդամ կօնսիստորիայի՝ Գաբրիէլ քահ. Տէր-Գաբրիէլեանց

ՀԵՂԵՂՆԵՐԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻՆ ՕԳՆԵԼՈՒ Դումայի ԳՈՐԾԱԴՐԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ նախագահը՝ համաձայն յանձնաժողովի 1896 թվի յունիսի 5-ի վճռի, սրանով տեղեկացնում է ի գիտութիւն ընդհանուրի, որ այն անձինք, որոնք վնասվել են հեղեղումից, կարող են դիմել Յանձնաժողովին անձնական բացատրութիւնների և յայտարարութիւնների համար, շաբաթը սկսած անդամ, շաբաթ օրերը, երեկոյեան 8 ժամից, Քաղաքային վարչութեան տունը. իսկ Յանձնաժողովին տրվելիք գրաւոր խնդիրքները կարող են տալ Քաղաքային Քարտուղարին, ամեն օր, մինչև ցերեկվայ 2 ժամը, Քաղաքային վարչութեան շինութեան մէջ: (№ 67) 5—5

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտարարում է, որ ընկերութեան խմբագրական Մասնաժողովը որոշել է հաւաքել ժողովրդական բանահիւսութեան վերաբերեալ նիւթեր՝ դիւցազներգութիւններ, հեքիաթներ, երգեր և աւանդութիւններ (մանաւանդ պատմական նշանակութիւն ունեցող): Ուստի վարչութիւնս դիմելով ձեռնհաս անձանց՝ առաջարկում է ուղարկել ընկերութեանը այդպիսի նիւթեր: Ներկայացրած աշխատութիւնները հետզհետէ կը քննվեն և պիտանի համարվածների համար կը տրվի որոշ վարձատրութիւն: (№ 70) 3—3

Дозволено цензурою, Тифлисъ. 21 Іюня 1896 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. 1891.